ՆԱԽԱԳԻԾ-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«_____» _____ 2023թ. N_____ -Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 32–րդ կետով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն տալ՝ սեփականության իրավունքով Լուսիկ Ադունցին պատկանող, Դավթաշեն վարչական շրջանի Դավթաշեն 6-րդ փողոցի հ.40/4 հասցեում, տարածագնահատման 7-րդ գոտում գտնվող 257.9քմ մակերեսով հողամասը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 13.04.2023թ. հ.05052023-01-0236 վկայական/, Երևան համայնքին պատկանող, Դավթաշեն 6-րդ փողոցի հ.40/2 հասցեին կից, տարածագնահատման 7-րդ գոտում գտնվող 257.9քմ մակերեսով հողամասի հետ փոխանակելուն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ԵՐԵՎԱՆԻ
ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Քննարկվող նախագծով նախատեսվում է սեփականության իրավունքով Լուսիկ Ադունցին պատկանող, Դավթաշեն վարչական շրջանի, Դավթաշեն 6-րդ փողոցի հ.40/4 հասցեում, տարածագնահատման 7-րդ գոտում գտնվող 257.9քմ մակերեսով հողամասը փոխանակել Երևան համայնքին պատկանող, Դավթաշեն 6-րդ փողոցի հ.40/2 հասցեին կից, տարածագնահատման 7-րդ գոտում գտնվող 257.9քմ մակերեսով հողամասի հետ:

Դավթաշեն վարչական շրջանի, Դավթաշեն 6-րդ փողոցի հ.40/4 հասցեում, տարածագնահատման 7-րդ գոտում գտնվող 257.9քմ մակերեսով հողամասը, սեփականության իրավունքով պատկանում է Լուսիկ Ադունցին /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 13.04.2023թ. հ.05052023-01-0236 վկայական/:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Դավթաշեն 6-րդ փողոցի հ.40/4 հասցեում գտնվող հողամասը փաստացի հանդիսանում է որպես հարակից հողամասերի մուտքն ու ելքը ապահովող ճանապարհ, հետևաբար դրա նպատակային օգտագործումն անհնարին լինելու պատճառով անհրաժեշտություն է առաջանում իրականացնել վերը նշված հողամասերի փոխանակումը:

Փոխանակվող հողամասը ընդգրկված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում և գտնվում է ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 15-ի հ.2330-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծով բնակավայրերի նպատակային նշանակության /կատեգորիայի/ բարձրահարկ բնակելի կառուցապատման գոտում:

Մասնագիտական որակավորում ունեցող «ԱԲԻՏ» ՍՊ ընկերության կողմից տրամադրված եզրակացության համաձայն՝ Դավթաշեն 6-րդ փողոցի հ.40/4 հասցեում գտնվող հողամասի շուկայական արժեքը կազմում է 12 600 000 /տասներկու միլիոն վեց հարյուր հազար/ ՀՀ դրամ, Դավթաշեն 6-րդ փողոցի հ.40/2 հասցեին կից գտնվող

հողամասի շուկայական արժեքը կազմում է 12 800 000 /տասներկու միլիոն ութ հարյուր հազար/ ՀՀ դրամ:

Քաղաքացի Լուսիկ Ադունցը 18.07.2023թ-ին Երևանի քաղաքապետարան հասցեագրված հ.Դ-87183 դիմումով հայտնել է իր համաձայնությունը վճարել հողամասերի շուկայական արժեքների տարբերությունը կազմող գումարը:

Համաձայն հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի հ.286 որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի՝ համայնքի վարչական սահմաններում, համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերի փոխանակումը դրանց օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կատարվում է համայնքի ավագանու համաձայնությամբ՝ համայնքի ղեկավարի որոշման հիման վրա:

Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները՝ մշակվել է ավագանու որոշման սույն նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ԵՐԵՎԱՆԻ

ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի ծախսերում և եկամուտներում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ԵՐԵՎԱՆԻ

ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ԵՐԵՎԱՆԻ

ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**